Պատասխաններ

Աշխարհագրություն առարկայի օլիմպիադայի հանրապետական փուլի – 2025-2026 ուս. տարի

9 – րդ դասարան

1. ա-ճիշտ; բ-ճիշտ; գ-սխալ; դ-սխալ; ե-ճիշտ; զ- սխալ; է-ճիշտ; ը-ճիշտ (**յուր.՝ 0.25միավոր**)

2. ա. Տարբեր ջերմատվությամբ օժտված վառելիքի տեսակները միմյանց հետ համեմատելու համար ներմուծված չափման միավոր: Դրան անվանում են նաև ածխային համարժեք, քանի որ հաճախ որպես պայմանական վառելիք ընդունվում է միջին ջերմատվությամբ օժտված ածուխը: Վերջինիս 1կգ այրումից ստացվում է 7000 կկալ ջերմություն (**0.5միավոր**): Ածխի մասին ուղիղ չհիշատակելու և անջատվող ջերմության քանակը չնշելու դեպքում՝ **0.25միավոր:**

բ. Պետական սահմանին հարող մինչև 1կմ խորությամբ շերտը կամ գոտին կոչվում է սահմանային շերտ (**0.5միավոր**): Ցանկացած բովանդակային սխալի դեպքում միավոր չի տրվում:

3. Նորվեգիա

4. ա. Աքվակուլտուրա (ընդունել նաև ծովային անասնապահություն)

բ. Արևափայլի տևողություն

5. ա. 1) 740 – 600 = 140մմ ս.ս. (**0.25միավոր**):

2) 140 x 10 = 1400մ հարաբերական բարձրություն (**0.25միավոր**)

3) 1400/20=70մ/կմ (**0.5միավոր**)

Եթե վերջին գործողությունում առկա է միայն հաշվարկային սխալ, սակայն բաղադրիչները ճիշտ են՝ **տրվում է հանրագումարային 0.75միավոր**: Եթե պատասխանը ևս ճիշտ է՝ **1միավոր**:

բ. 1) 360-110=250^0 (**0.5միավոր**)

2) 250 x 111 = 27750 կմ (**0.5միավոր**)

6. Գծագիրը պետք է ունենա այսպիսի կամ նմանատիպ տեսք (**1միավոր**): Հետևյալ թերություններից յուրաքանչյուրի համար նվազեցնել 0.25միավոր՝ երկարությունների սանդղակը հաջող չէ դինամիկան պատկերելու համար; լեգենդը հստակ չէ կամ բացակայում է; առանցքների արժեքների չափողականությունը նշված չէ; կորերից մեկը սխալ է: Մեկից ավելի կոր սխալ պատկերելու պարագայում՝ 0 միավոր



ա. Չինաստանը (**0.5միավոր**)՝ 105.2% (**0.5միավոր**): Ճիշտ համարել նաև 2.05 անգամ պատասխանը:

բ. Աճում են (**0.5միավոր**), ինչը հիմնականում պայմանավորված է արդյունաբերության զարգացման բարձր տեմպերով և հետևաբար ապրանքների ու հումքի փոխադրումների ծավալների աճով (**0.5միավոր**):

7. Շիկահողի արգելոց, Սևան ազգային պարկ, Էրեբունի արգելոց, Արփի լիճ ազգային պարկ

Իր դիրքում ճիշտ նշված յուրաքանչյուր պատասխանի համար տրվում է **0.25միավոր**

8. ա. Արարատյան դաշտ **(0.5միավոր)**: Ստորերկրյա ջրերի ինտենսիվ օգտագործման արդյունքում դրանցում պարունակվող աղերը նստում են հողին և պատճառում աղակալում **(0.5միավոր)**: Եթե պարզապես նշվում է սխալ ոռոգման արդյունքում՝ **0.25միավոր**

բ. Կանադա (**0.5միավոր**): Կանադայի ափագիծը խիստ կտրտված է և հյուսիսում տարածվող Կանադական-Արկտիկական կղզիախմբի բազմաթիվ կղզիների շնորհիվ ափագիծը զգալի երկարում է (**0.5միավոր**):

9. **ա.** Աժդահակ-Ե; Արփի լիճ-Ա; Երևան-Դ; Շիրակի դաշտ-Բ; Արագած-Գ; Սևանա լիճ-Զ
բ. ա-ից գ՝ հարավ-արևելք (ընդունել նաև հարավը); դ-ից ե՝ արևելք

10. ա. լեռնանցքները (**0.5միավոր**); պատճառը լեռնանցքների գոտում առկա բարձրությունների տարբերությունն է, որը հանգեցնում է ճնշումների տարբերության և կայուն ուժեղ քամիների ձևավորման (**0.5միավոր**):

բ. Հնդկական (**0.5միավոր**): Ի տարբերություն այլ օվկիանոսների Հնդկական օվկիանոսի տարածքի զգալի մասը տաք ջերմային գոտում է (**0.5միավոր**):

11. Ա-6; Բ-8; Գ-5; Դ-1; Ե-4; Զ-2; Է-7; Ը-3 (**յուր. 0.25միավոր**)